

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆ

ՎԵՆՍԻՆԻ ԱՆՏԱՌՈՅ

Բ.

ԿԱՄԻ 2-րդ համարը ձեռնարկած էր Սարաֆեանի «Վենսենի Անտառը»ի վերատպումին, տալով անոր առաջին բաժինը։ Ներկայ թիւով՝ կու տանիք երկրորդ բաժինը, լոյս տեսած «Նայիրի» ամսագրին մէջ, Հայեա, 1947-ին, թիւ 11-12։

Անտառին մէջ կան շատ մը ուրիշ աւելի մեծ լիճեր։ Անոնցմէ մէկուն եւ մերթ միւսին կ'երթամ երբեմն։ Մէկուն մէջ սիրահարներ կը թիավարեն։ Միւսին շուրջ կերտեցին միջազգային քաղաք մը, որ փայլելէ յետոյ մարդոց բոլոր ճարտարութիւններով, անհետացաւ ի սպառ։ Կը մնան թանգարան մը եւ կենդանաբանական պարտէզ մը միայն։ Եկան ու անցան հոնկէ աշխարհի բոլոր հրաշալիքները առանց հետք մը ձգելու։ Կը մնայ միայն կենդանաբանական պարտէզը։ Ինքնաշարժեները կ'անցնին լայն ծառուղին ու արուեստական ժայռին կատարէն կապիկներ կը ծափահարեն, զիրար կը ցնցեն, կը ճշան ու ոչիլ կը փնտուն իրարու մազերու մէջ։ Արջը կը սուզուի հեշտանքով աւազանին ջուրին մէջ։ Առիւծը կը բանայ ու կը փակէ աշքերը, արհամարհական՝ գլուխը թաթերուն վրայ։

Եկան ու անցան աշխարհի բոլոր հրաշալիքները, Անկորի տաճարը, վիթիարի ու մղաւանչային, արդի ճարտարապետութեան բոլոր գլուխ գործոցները, Ալճերիոյ գոց շուկաներն ու գորգերը, անուշահոտ իւղերն ու խունկերն Արեւելքի, բոլոր բերքերը Ափրիկէի, Ասիոյ, Եւրոպայի եւ Ամերիկայի։ Կու զային տեսնել զանոնք հարիւր հազարաւոր այցելուներ։ Ու զրախտ մըն էր ծառերէն կախուած լուսարձակներով ու ձայնասփիւռներով։ Սրճարաններ, պարասրաններ, թատրոններ, խանութներ, գեղարուեստական ու ճարտարաբեստական հարստութիւններ։ Ճերմակ պատեր, մաքուր փողոցներ։ Ամբողջ բերքը քաղաքակըթութեան, իր բոլոր խոստումները երջանկութեան։ Անցան։ Նիւթական պայմաններուն զարգացումը անբաւարար էր մարդուն որ պէտք ունի նաեւ հոգեկան գոհացման ու զարգացման։ Կը սպայի այս պակասը ամայի լճափին վրայ։

Մարդերէն աւելի արդար երեւցան ինծի օր մը վայրի ըսուած այդ անասունները։ Լսեցի անոնց լացը։ Առիւծներու գոսիւնները կը ճաթէին ժայռերու պէս, կտոր կտոր կը թաւալէին անտառին մէջ՝ մինչ մայրաքաղաքին բոլոր կողմերէն լսուող սիրէնները կու տային վտանգին ազդանշանը։ Անոնք կ'անցնէին ծառերուն մէջէն կորկոններու պէս, զիրար կանչելէ վերջ թաղամասէ թաղամաս, կը մտնէին հորիզոնին արիւնին մէջ։ Կը մօտենար հետզհետէ սաւառնակներու մուռնչը, մակընթացող ծովու մը գաֆանութեամբ, մեքենական սղոցի մը թաւալումով, կտրտելով երկինքը։ Թոչունները կը նետուէին ճիւղէ ճիւղ՝ աւելի սարսափահար երբ մորթուող եղան աղաղակով մը կը յորդէին սիրէններու կտրուած գլուխները։ Կը փափչէին նաեւ կիները՝ հաւաքելով իրենց երեխաններն ու ճեսագործները։ Ու ամայութեան մէջ, քանի մը վայրկեան սպասումէն յետոյ, կը պայթէր առաջին ոռոմբը։ Հսկայ հարուած մը տապարի։ Կը գողային բոլոր ծառերը ու

կը տապալէր անոնցմէ մէկը ճչալով։ Քաղաքին մէկ ծայրէն միւսը խուժող կարմիր լոյսերէն ոմանք կը թուչին դէպի անտառը՝ ծառերուն կատարներուն քսուելով։ Ու անոնք կը շատնային հետզհետէ քանի մութը կը կոխէր։ Կը դառնային աւելի վառ։ Ոմանք կ'իջնէին ահարեկիչ յամրութեամբ մը, մոլորակներու պէս, որ վար պիտի իյնային յանկարծ երբ փրթէր զիրենք բռնող չուանը, բաժնուէր երկնքին թաւալող զլանէն։ Ուրիշներ, միշտ աւելի վարէն, հովէն տարուած՝ կը սաւառնէին անտառին վրայ, սփռելով իրենց մետաղային լոյսը։ Ու կը պայթէր յանկարծ փոթորիկը։ Ռումբեր՝ վերէն՝ իյնալով քաղաքին վրայ, հրեղէն ալիքներ՝ որոնց մէջ կը տատանէին շէնքերը, կ'ուռէին տանիքները, կը շրջէին մութին մէջ թափելով իրենց առած կրակը։ Թնդանօթներ վարէն՝ որ հասնելով վեր, կ'անցնէին սաւառնակներուն քովէն՝ մոլորակներու թաւալումով։ Հրափամփուշտներ, լուսարձակ գիծեր, ետեւէ ետեւ, արագ, անընդհատ, յարածուն, շատրուանի մը ժայթքումով, կամ երամ երամ՝ հորիզոնէ հորիզոն։ Ալիւծներէն մէկը՝ խենթացած այս բոցերէն՝ կ'ոռնար երախը երկնքին բացած, կը նետուէր ու կ'իյնար իր որջը կապիկներու աշխարհէն զատող փոսին մէջ։ Տեսայ եղջերուի մը արշաւասոյր վազքը՝ բացուող ու գոցուող լոյսերուն եղջիւրներուն փաթթուած։ Տեսայ կապիկներուն ահարեկ փախուստը ժայռին կատարէն վար ու ճերմակ արջ մը՝ որ քարայրէն ներս ու դուրս կ'երթեւեկիր անընդհատ, ջղային՝ խոռով՝ երկնքին տարօրինակ փեթակէն ու հրեղէն հոլերուն մետաղահունչ թաւալումէն, բոցէ տարօրինակ ծառերէն որ կ'անձէին մէկ վայրկեանի մէջ մինչեւ երկինք ու կը տապալէին յանկար։

Դժոխք մըն էր Վէնսէնի անտառը։ Անցան երկու սաւառնակներ իրար հալածելով։ Ու ծառերը կը լուսաւորուէին անոնցմէ մէկուն պոչին կառչող բոցէն եւ կը ծակծկէին փամփուշտներու տարափէն։ Մետաղէ կտուցները կը զարնուէին ճիւղերուն, կը կոտրէին զանոնք, կը թափէին տերեւները։ Ամբողջ մտածումս էր, այդ պահուն մտնել հողերուն խորը։ Խլորդները աւելի բախտաւոր էին։ Գազանները իրաւունք ունէին վախնալու մարդերէն։ Անոնք, զարէ զար՝ իրենց զարգացուցած մահացու գործիքներով կրնային օր մը օդը հանել ամբողջ երկրագունդը։ Աւա՛զ։ Վասնզի զեղեցիկ էր նոյն ատեն տեսարան։ Կը տեսնէի երկնքին մէկ կողմէն միւսը նետուող գունաւոր գնդակներ ու հէքիսաթային էակներ ամպերուն մէջ, պարուհիներ, վարդեր ու մութին մէջ դարձող լուսավառ կարուսէներ։ Տեսողութիւնս չէր սխալեր։ Ի՞նչ հրաշքներ կրնար գործել գիտութիւնը, եթէ իր բոլոր գիւտերը գործածէր բարութեան։ Ապաստանելով քարէ կամրջակի մը տակ, կը նայէի անընդհատ,

խորհելով թէ անցած էր այլեւս շրջանը անկախութեան ձգտող մեր եւ ուրիշ պղտիկ ազգերու յոյսին: Հսկայ կայսրութիւններու դարն էր որ կը բացուէր: Եւ աշխարհը կ'երթար դէպի կործանում, եթէ հաշտութեան եզր մը չգտնէին անոնք իրարու հետ: Նախընտրելի էր նոյնիսկ որ անոնցմէ մէկը կամ միւսը յայտարարէր համաշխարհային պետութիւն մը, գաշնակցութիւն մը բոլոր ցեղերու, որպէսզի խաղաղութիւն ըլլար մարդոց հոգիներուն մէջ: Դաշնակցութիւն մը բոլոր ազգերու: Պղտիկները այսպէսով, պիտի ունենային իրենց տեղը՝ իրենց հասակին չափով: Կը տեսնէի քաղաքական ու գիտական արոքալիբսեան հրէշներու դարը: Ու երկիրը, որ գրաւուած, ինկած էր անոնցմէ մէկուն թաթին տակ, ու իմ պղտիկ ժողովուրդս որ բազմաթիւ անդամներ, գարերն ի վեր, բարձրացեր էր դէպի յոյսը եւ ինկեր, կը յուղէին զիս այս պահուն, որովհետեւ անոնք պիտի ապրէին այսուհետեւ մեծերուն կամքով միայն ու հրաժարելով հայրենասիրութեան մը աւանդական ըմբռնումէն եւ անկախութենէն:

Ու այս դառնութիւնս մնաց, Փարիզի ազատագրութեան օրերուն ալ, երբ գարձեալ ինկայ անակնկալ կերպով ծառէ ծառ կոռողներու միջեւ: Տկար մը, ուժովներու օգնութեամբ կը վտարէր զինք գերութեան մատնող հրէշը, հօրներէն մէկը որ քայքայուելու վրայ էր: Բայց այդ յաղթանակը չէր խանգավառեր զիս, որովհետեւ կը տեսնէի արդէն ուրիշ հրէշի մը չուքը անոնց վրայ: Փամփուշտները կը սուլէին, կը սահնային իժերու նման, կը խրէին ծառերուն ու հողերուն: Հողին կառչած դարձեալ (ի՞նչ հակասութիւն գոյութեան պահպանման այս բնազդին, յուսահատ մտածումիս եւ հրճուանքիս միջեւ), տեսայ հրասայեր որ կու գային անտառին խորէն, տապալելով, ճգմելով, պատուելով ծառերը: Գազաններէն աւելի գագան: Ամբան արեւոտ օր մը, տեսնելու համար տարբերութիւնը կանաչին ու հրացիրներէն ժայթքող կարմիրին: Ու կոհւէն վերջ, անտառին մէջ ինկած գիտակներուն արիւնը՝ խոտերուն վրայ կը վերածէր այդ տարբերութիւնը ցայտուն ու խոռվիչ ողբերդութեան:

Ահա պատերազմներուն փառքը: Ահա ասպետներու հպարտութեան յիմարութիւնը: Յաղթանակը՝ իրենց մեղքը: Ու բոլոր ժողովուրդներու առասպելները կը փայլէին այդ մեղքով, արիւնով ու շքեղացուած, տասնապատկուած խեղճութիւններով: Հայրենասիրութեան ըմբռնումը չունէի երբ պղտիկ էի: Չունէի նաեւ երկր երկիր սահմաններու գոյութեան գաղափարը: Ու պատմութեան գիրքը կը մնար գասագրքերուս ամենէն վերացականը, անհասկնալին: Ու կ'այսպանեմ ատոնք բոլորը, հիմա որ կ'ըմբռնեմ ոճիրներու վրայ

դրուած անոնց հիմը: Այպանելի՝ բոլոր աշխարհակալութիւնները որ ոտքի ու սուրի տակ կ'առնեն ժողովուրդներ, մինչեւ որ քիչ քիչ քայլայուին իրենց մեծութենէն, շուայլութենէն ու ցոփութենէն, իյնան իրենց կարգին: Այպանելի՝ բոլոր բռնակալները, ու քաղաքական ու կրօնական բոլոր ճշմարտութիւնները, որ կ'անցնին միլիոնաւոր զոհեր գգելէ վերջ, տեղի տալով նոր ճշմարտութեան մը առջեւ: Ու կը լեցուէին աչքերս տեսնելով կանաչութիւնը կարմրած՝ յիմար, միամիտ ու խարուած արիններով, մինչ ծառերը կը տատանէին կշիռի մը նժարներուն պէս: Ամէն պատերազմ, ամէն յեղափոխութիւն կը խարեր վերջինը ըլլալու խոստումով մը: Եւ ան որ կը տեսնէ այդ խոստումներուն նենգութիւնը, կը տեսնէ նաեւ գալիք պատերազմները ու ոչ մէկ հաւատք ու յոյս արմատ կը նետեն իր մէջ: Ու իր տիրութիւնն ու գութը կը դառնան ցասում՝ մարդոց կամաւոր կերպով ընդունած այս անհեթեթութեան առջեւ:

Որ այսպէս, այդ օրը կը տեսնէի թէ ցեղս եղած էր նուազ անհեթեթը բոլոր ցեղերուն մէջ: Տառապած էր ան այս բոլոր յիմարութիւններով ու սրբութեան մը հասած: Զէր երազած աշխարհակալութիւններ ու տիրութիւն, ու վեհանձնութիւն ունեցած էր իր քանի մը յաղթանակներուն մէջ ալ: Ու ան իր պղտիկութեան եւ անյայտութեան մէջ՝ եղած էր առաքելական, մեծ, բերելով գարերն ի վեր միակ գեղեցիկ ճշմարտութիւնը, մարդոց եղբայրութիւնը: Ու իր այս առաքելութիւններով տուժած՝ խարուած, ջարդուած իր անկեղծ ու միամիտ խանդավառութիւններուն համար, ան դարձաւ իրանս ի վեր բարձրացող բոլոր մը, արդարութեան կարօտ յուզում մը, վիշտ մը որ հետզետէ զարձաւ ցասումներուն դաժանը: Կ'երազէի ահաւոր ուրախութիւնը աշխարհի քանդումին: Կ'ուզէի տեսնել քաղաքակրթութեան սնանկութիւնը, ինքնաքայքայումը: Պիտի հաւաքէի այն ատեն մեր մեռելները անտառին բոլոր կողմերէն, պիտի անցնէի անոնց առջեւ եւ պիտի առաջնորդէի զանոնք դէալի աւերակները երեխնի գոռող ոստաններուն: Ու իրիկունները, երկար պտոյտներէ վերջ, մենք պիտի նստէինք աւերակներուն վրայ, եւ աշխարհի բոլոր սնափառ աշխարհակալներուն գանկերուն խարոյեկին, եւ ժողովուրդներու մոխիրի ծովուն առջեւ՝ մենք պիտի երգէինք երգը ունայնութիւններուն ու մահը աւերիչ տգիտութեան...

*

Վէնսէնի անտառը կը միանայ իր անունով դղեակի մը՝ որ իրմէ դուրս կու գայ ընդծովեայի մը պէս: Ան տուած է իր կանաչը նոյնիսկ անոր տանիքին ուր կը բուսնին թուփեր ու խոտեր: Կանաչի կը զարնեն

աշտարակին քարերն իսկ որ կը փայլին միջնադարեան տիբութեամբ:
 Դղեակը կը ճեղքէ ամպերը: Իր կատարէն կ'երեւայ ամբողջ
 մայրաքաղաքը, անսահման ծովը տուներուն: Դադրած այլեւս
 պահակը ըլլալէ անոնց, այս բերդը կը կենայ հիմա պատմական
 վկայութեան մը պէս: Ի՞նչ կոհւներ: Քարերը, պատուհաններուն
 երկաթէ ձողերէն հոսած ժանգերով, կը յիշեցնեն թափած արիւնը:
 Հալած, մաշած տեղ տեղ՝ անոնք կը տիրեցնեն իրենց ապագայ
 աւերակի պատերով: Վերջին ոռումը մը վար առած է յաղթ պատերէն
 մէկը: Ու զղեակին շուրջ փորուած փոսը, ուր, ջուրին տեղ, կ'աճին
 բանջարեղէններ, կը մտնէ ներս, կը միանայ բակին: Հսկայ վէրք մը:
 Խորը կէս այրած եկեղեցի մը՝ ուր ծունկի՝ կ'աղօթէին ջահակիր
 իշխաններ ու ասպետներ: Կը լսուին տակաւին սէրէն յուզուած սրտերը
 գեղեցիկ իշխանուհիներու: Ու կը սարսուան տանիքին վրայ աճած
 խոտերը, մինչ կը դողան լուսինին ճառագայթները մարտկոցներու
 մէջ՝ ուրկէ կ'արձակէին նետերը: Զօրանոց մըն է հիմա բերդը ու
 իրիկունները երբեմն կը բարձրանայ զինուորի մը նուագարանին
 տիպուր երգը, կը փայլի մեռելի մը ոսկի ակռաներուն պէս:
 Մեռելներուն մէջ կան ականաւոր բանտարկեալներ: Անցած, ձգած
 իրենց անունները քարերուն վրայ: Նոյնիսկ իր դարը հեգնանքով
 խոռվող փիլիսոփայ մը: Կան թշնամիններ որ գրաւեցին այդ դղեակը ու
 գնդակահարելէ եւ փոսին մէջ թաղելէ յետոյ հարիւրաւոր
 պատանդներ, թաղուեցան իրենց կարգին՝ իրենց զոհերուն քով,
 պարտութեան օր մը: Փախուստի այդ օրերուն, զղեակին խորերէն,
 բռնուեցան քանի մը գերիններ որոնց վախն ու դալկութիւնը
 արհամարհելի կը դարձնէին իրենց երբեմնի գոռոզութիւնը:
 Աշտարակին կատարը ելած ու իջած են բազմաթիւ դրօշներ, բոլորն ալ
 յաւակնոտ եւ սակայն մէկ առ մէկ սուզուած, պատմութեան մէջ:
 Խօսքը գերջինինն է: Ու ան հպարտութեամբ կը ծփայ՝ նիզակի մը
 ծայրը: Ու դղեակի կողքին, որ թանգարան մըն է, կեցած է
 փախչողներէն մնացած հրասայլ մը, անճանաչելի իր կծկտած,
 ժանգուտած ու ծոած երկաթներով: Թուչունները կը մտնեն ու կ'ելլեն
 թնթանօղին փողին մէջ՝ որ ատեն մը կ'ոռնար շրջակայ տուներուն
 վրայ, Ելրոպայի մէկ ծայրէն միւսը անցնելէ, կրակ ու մահ ձգելէ
 յետոյ: Առջեւէն, պողոտայէն կը սուրան կառքերը: Կը շարունակուի
 կեանքը, կը հոսի:

*

Գթառատ ծառաստան մըն է ամառը Վէնսէնի անտառը, տանս
 ետին, զինուորական հիւանդանոցի մը շուրջ: Իր ծառերը կը սահին
 հիւանդներուն եւ զինուորներուն տենդակառ երազին մէջէն, միփ-
 թարելու համար զանոնք բնութեան բառերով, որպէս զի չարթնան

անոնք իրենց անօգուտ զոհաբերման ցաւով, իրենց կտրուած թեւին կամ ոտքին կարօտովը: Անոնք կրնան տեսնել իրենց թեւն ու ոտքը քարիւղի արքայի մը կամ սեւ շուկայէն հարստացողի մը ձեռքին մէջ եւ կրնան աղաղակել քարերը ցնցող տիրութեամբ: Ամէն կէս դիշերէ վերջ՝ կը լսեմ յօշուուող թռչունի մը ճիշը: Ու աղերսական այդ կանչը կը խրի սրտիս դաշոյնի մը պէս: Կ'ելլեմ երբեմն անկողինէս, կը մօտենամ պատուհանին, տուամին՝ որ կը յիշեցնէ միշտ ինծի ուրիշ ողբերգութիւն մը, զանգուածային ոճիր մը ու ոչինչ կը տեսնեմ: Ոչինչ: Կը լոէ աղաղակողը: Կը վերահաստատուի թաւշային լոռւթիւնը: Տկարը զերծ է հետաքրքրութենէն: Աշխարհը յոգնած է մեր ժողովուրդին ողբը լսելէն: Մենք իսկ յոգնած: Ուզեցինք պայքարիլ ու չփիտցանք կազմակերպել այդ պայքարը: Տուինք աշխարհի ամենէն մեծ հերոսները եւ սակայն անոնք եղան լեռներու արծիւներ միայն, քաջ անհատական արարքներով: Զեղանք միակտուր ծառացումը, միակտուր վրէժը: Ու վատութեամբ տարինք մեր կէսին չարգը, դաւաճանութեամբ, անկարութեամբ:

Տնակ մը կայ այս պարտէզին մէջ: Տարիներով կարծեցի թէ մեռելներու յատուկ չէնք մըն էր ան: Գիշերները կը լսուէին քայլեր անոր շուրջ: Կը բանային դուռը, կը քաշկոտէին պարկի նման բան մը: Կը ճշային դրան ծխնիները: Օր մը շարժեցի խնդուքը ծանօթ բժիշկի մը: Անէէ ի վեր գիտեմ թէ գեղերու շտեմարան մըն է ան: Հիւանդանոցին մէջ կայ հայութենէ ելած հայուհի մը, կինը ֆրանսացի պաշտօնեայի մը: Կայ իր երիտասարդ զաւակը՝ որ հայերէն բառ մը չունի բերնին մէջ: Կայ նաեւ հայ վիրաւոր մը, որ չի գիտեր թէ յանուն ինչո՞ւ կոռուած է: Պիտի մեռնի ու կ'ուզէ մեռնիլ այն ժամուն՝ երբ շէնքին միւս ծայրը բնակող պճրասէր բայց սրտաբուխ հայուհին կ'այցելէ իրեն: Զհասաւ փափաքին: Հիւանդանոցը մերժեց պահել զինք մինչեւ մահը...

*

Յաճախ կ'արթննամ գիշերները: Անիծուած է կարծէք քունս: Ամէն երազ խենթութիւն մըն է: Իմ երազներս ամէն խենթութիւններէ ստելի խենթ են: Կ'արթննամ իրականութեան մէջ փնտոելու համար անդորրութիւն մը, ապահովութիւն մը, որոնց համար դարձեալ կը փախչիմ իրականութենէն, կը փորձեմ սուզուիլ քունին ու երազին մէջ. եւ չեմ կրնար: Կ'արթննամ բարախող սրտով: Սիրտ մը որ փրթիլ կ'ուզէ ինչ, կայ մը ցնցող առագաստի մը պէս, իր ոտքին կապը քաշող բազէի մը նման: Սիրտ մը՝ որ ինկած է վրաս, զիս առած իր գազանի թաթերուն տակ: Մտածումս իսկ անկարող է հանգստացնել զայն: Ան տառապողն է եւ տառապեցնողը: Խղճմտանքի ձայնը բոլոր

սիսալներուս ու մեզքերուս ու յիմարութիւններուս ձգած աւերակներուն տակէն: Բողոք մը՝ մտածումիս բռնակալ կաշկանդումին դէմ: Վախ մը՝ այդ բռնակալէն: Զայն քանդելու ցասում մը: Սերմ մը՝ սերունդներէն եկող, ինծի օտար եւ սակայն ամենէն հարազատ մասս: Խաթարուած նաեւ կեանքով ու մտածումներով:

Բաժնուած այսպէս երկուքի, գիշերուան լոռութեան մէջ, կէս քուն ու կէս արթուն՝ ես կ'ենթարկուիմ չարչարանքներուն ամենէն մեծին: Քրտինքը կը հոսի ճակտէս, կուրծքէս: Մինակ՝ աշխարհին ծայրը, լքուած բոլորէն, կը նմանիմ մահապարտի մը՝ որ կ'անգիտանայ իր մեզքը: Ու քամին, ու ծառերուն խարչափը խաւարին մէջ, կը դառնան դաժան՝ կառափնատի մը բարձրացման ալմուկին չափ: Ժամն է՝ երբ բոլոր ճակասութիւններս կու գան, կը զարնուին իրարու: Ժամն է որ Սփիռոքի ծնունդը կ'ապրի իր ամբողջ ողբերգութիւնը: Կը ցնցեն յիշատակները զիս, կը հալածէն, կը հեգնէն, կը վերածէն ոչինչի: Ընկերներս, մեռնողները, մեռան զիս ուրանալով: Ողջերը կը ծածկեն դատաստան մը: Մե՞զք մըն է անձնականութիւնը: Կ'արհամարհեմ զիս դատողները: Եւ սակայն կ'ուզէի վայելել անոնց վստահութիւնն ու համակրանքը: Հոդ չէ՞ զրելու կորովիս ու տառապանքիս գաղտնիքը:

Եւ ահա, կ'ատեմ ես զիս այս գիտութեանս համար: Ո՞ւր է այդ բոլոր կորովներէն ու տառապանքներէն վերջ իրական անձնականութիւնս: Երբեք քաջութիւնը չունեցայ պոռակու մարդոց երեսին այն ինչ որ կը մտածեմ իրենց մասին: Երբեք շնօսեցայ թաքուն տենչերէս: Ու կը զղջամ, կը տառապիմ երիտասարդութեան քանի մը միամիտ զեղումներէս, արուեստագէտը դարձնելու համար աւելի իրական: Կեանքը խաղ ու խորամանկութիւն էր: Խաղ ու խորամանկութիւն էր արուեստը: Խաղ ու խորամանկութիւն էր խելքը, ամբարում մը օտար տարրերու ի վնաս մեր իրականութեան:

Օ՛ իմացականութիւն, դառնութեան բաժակս:

Եւ անով էր միայն որ կարելի էր մաքրուիլ, զիտակցութեան հասնիլ, բուժուիլ, խաղաղիլ: Իմացականութիւն պէտք էր ուրանալու համար իմացականութիւնս: Ո՞ւր եմ: Վիհի մը առջեւ, խաւարին մէջ ու վիհին եկող փորձութեան մը՝ դէմ: Լքել մտածումներս, դառնալ մարդ բոլոր մարդոց պէս: Արգիլուած է մեզի գուրս գալ մարդկային պայմաններէն: Ինչո՞ւ յամառիլ այն ատեն: Ունայնութիւն մը չէ՞ ի վերջոյ, պատրանք մը չէ՞ այն որ կը բխի մեր ուղեղէն, մեր վերջին հպարտութիւնը: Այնքան ուղեղներ եկած, անցած ու մոռցուած են դարերուն ետին: Կ'արժէ՞ տառապիլ: Բայց այս ուրացումն իսկ տաժանք մըն է: Ու գիտեմ որ անկարելի է հասնիլ փրկութեան հազիւ

զայն տեսնելէ վերջ իսկ լեռան կատարէն։ Մովսէս խորտակեց իր տախտակները։ Ու այդ անկարելիութեան առջեւ՝ չկայ Տէր մը՝ որուն կարենայի ըսել. «Հա՛յր, մի լքեր զիս...»։ Զկայ իմաստութիւն մը նաեւ որուն մէջ կարենայի գտնել ապաստան մը։ Բոլորն ալ մտքի խաղեր, անհամապատասխան ինծի։ Անհամապատասխան՝ այն որ կ'ուրանայ մարմինը, հաւատալով միայն հոգեկանին, եւ որուն վերացական բառերը սակայն կը մատնեն միշտ միւսներուն իրականութիւնը, անհամապատասխան՝ այն որ կ'ուրանայ մարդուն բանականութիւնը վերածելու համար զայն անասունի մը։ Անհամապատասխան՝ այն որ անբաժան կը համարէ միս ու հոգի։ Անհամապատասխան՝ Պուտտային ժափիը։ Ամբողջ երջանկութիւնը հրաժարման մէջ չէ, ոչ ալ գիտակցութեան։ Ու ի՞նչ պիտի ընէին մարդիկ եթէ բոլորն ալ ժամէին։ Պիտի գաղըէին գոյութիւն ունենալէ ժափին պատճառներն իսկ։ Այդ ժափար, իր գոյութեան համար՝ պէտք ունի ուրիշներու յիմարութիւններուն ու դժբախտութիւններուն՝ որոնց վրայ կը ծփայ ան լոյսի մը պէս։ Անհամապատասխան՝ այն որ կը ճառէ զերմարդէն եւ սակայն մարդերը կը մէջ դէպի գաղանութիւն։ Ահա վերջին պատերազմէն առնուած դասը։ Պատիկ են բոլոր անոնք որ կը տիրեն ուրիշի մը վրայ, անսասնական, նիւթապաշտ, գոռող, սնափառ։ Իմացականութիւնը պէտք է ըլլայ այն ուժը որ կ'արհամարհէ աշխարհիկ ուժը։ Ես երազեցի մեր խելքը վեր նաեւ աստուածներէն զորս տապալեցինք, այլասէրներէն որոնց նենգութիւնը տեսանք, Աստուծմէն՝ զոր ստեղծած են մարդիկ համաձայն իրենց փափաքներուն, անոր սալով սահմանափակ կերպարանքը մարդու մը, դաժան ու բարի՝ վրէմինդիր ու եսասէր, ծնունդը հակասական ու անպարկեշտ կրօնքի մը։

Ժամերով, մտածումներուս հոսանքին վրայ, խաւարին մէջ՝ կը սթափիմ յանկարծ։ Կը զարնէ քունքիս երակներէն մէկը։ Վտանգի աղդանշան մը։ Ու կը վախնամ ահա կորսնցնելէ այդ գլուխը, բոլոր տառապանքներուս աղբիւրը։ Ի՞նչ պիտի ըլլամ առանց անոր, աւելի թշուառ էակ մը, գերի մը չնագայլերուն առջեւ։ Ծիծաղի կամ գութի առարկայ մը։ Ատենէ մը ի վեր ցաւ մը կը հալածէ այդ ուղեղը։ Յաւէն աւելի նենդ բան մը, որդ մը որ կը սահի անոր ծալքերուն մէջ, սառոյց մը որ կը թմրեցնէ զայն, սարդ մը՝ որ կը վերածէ զայն սարդոստայնի մը։ Կը քաշուին աչքերուս կոպերը, կ'այրին։ Յաւէն աւելի թաքուն բան մը՝ ուղեղիս մէջ խրած ապակի մը։ Եւ ահա ուրիշ կոփւ մը, գոյութեան կոփւը։ Կը շփեմ յօնքերս, կը ճզմեմ վիզս մատներուս մէջ, կը փակեմ աչքերս։ Կը գաղորիմ մտածելէ։ Բայց ահա կը շարժի ուղեղս այս կատարեալ անբանացման մէջ իսկ, կը շարժի բուրդէ կծիկի մը պէս

ու իր մէջէն կը փայլակեն զանազան լոյսեր։ Ու իմս չէ կարծէք գլուխս, այլ մարմնիս կապուած ուռ մը, խուլ, մութ, նեղացուցիչ ու ընկրկիչ……

Ու քունը, երբ գայ, կ'ըլլայ շնորհներուն ամենէն մեծը՝ որուն ոչ սէրը կը հաւասարի, ոչ փառքը, ոչ ալ հարստութիւնը……

*

Անտառը կը ցնցէ զիս քունիս մէջ։

Յաճախ կ'արթննամ աշնան անձրեւոտ գիշերներուն։ Քիւէն ընդհատ ընդհատ թափող ջուրը կը նմանի վէրքէ մը ժայթքող արիւնին։ Ան կը հոսի Յիսուսի մը կողէն, տիուր՝ մարդկային խորհուրդով։ Առաջ անձրեւին տակ՝ տնակս կամ այգիին վրանը նոյի տապան մըն էր տղայական անփութութեանս անհունին մէջ։ Երջանիկ ու գինով էի հազար ու մէկ գիշերներու պալատի մը մէջ՝ պարուհիներով, նարկիլակներով ու շատրուաններով, տիաուր ու գինով էի այդ անձրեւով երիտասարդութեանս, Փարիզի պանդոկներէն մէկուն մէջ։ Պոտէուական ու Վէրջէնեան շրջան մը։ Հիմա տողանցք մըն է ան սիդապանծ զինուրըներու, որ ալ պիտի չվերադառնան։ Մակընթացութիւնը՝ գարերու թշուառութիւն։ Սոսինձ մը՝ որ կը հոսի պատերէն, կը սողայ պատուհանին ապակիներէն վար։ Նաւու մը կոտրած կողէն ներս լեցուող ջուր մը։ Վիրաւոր թոշուն մը՝ որ կ'իյնայ, կը զարնուի բակին քարերուն։ Վիրաբոյթի մը գանակը՝ միսերուս մէջ՝ ուր իր խոնաւութիւնը կը տարածէ եթէրի մը պաղը։

Ե՞րբ, վերջապէս, մեր դանդաղ յառաջդիմութիւնը, սպառելով բոլոր չարիքները, պիտի փոխարինէ մանկութիւն այդ երջանկութիւնը, զոր կը խէ ան մենէ իբրեւ խեղճութիւն։ Խոնջ ու թշուառ եմ։ Ե՞րբ, ծովերէն անդին պիտի ողջունենք այդ գիտակից արդարութիւնը մարդոց։ Ե՞րբ պիտի տեսնեմ իմացական քաղաքի մը կերտումը հայրենի հողերուն վրայ, միանկար հարաւորը այլեւս եւ սակայն վեր բոլոր խեղճ անկախութիւններէն՝ երբ այլեւս եղբայրութիւնը կ'իշխէ ցեղերուն վրայ։ Անտուն ու մինակ եմ եւ կ'ուզեմ տուն մը եւ հայրենիք մը՝ ձգտումիս հաւասար։ Ե՞րբ վերջապէս, համոզուած՝ պիտի լծուիմ զայն կերտելու աշխատանքին, իմացական այդ ոստայնին՝ ուր պիտի չտեսնեմ այլեւս յիմար նայուածքներ։ Ե՞րբ պիտի գտնեմ ճշմարիտ բառերը երգելու համար դարերն ի վեր իր խորհուրդին զոհ՝ տառապած ազգիս իմաստացումը։

Մինակ եմ ու հալածուած կեանքէս՝ որ կը հեգնէ, կը վերածէ զիս ոչինչի: Բայց մեծ է դեռ ընդգիմութիւնս: Ու, ի վնաս ինծի, կը մեծնայ քիչ քիչ այդ ոչինչը, կը ծաւալի, կը տարածուի, սերունդներէն ինծի եկող ու իմ մէջս վերջանալու տագնապէն բռնկած՝ զիս հրկիզող կրակով մը՝ դառնալու համար հրձիգ ջահ մը...

Կը վառէ, կը խորտակէ աշխարհի բոլոր արգելքները, հեգնելով բոլոր կարծիքները: Ժամն է երբ մահն ու կեանքը կ'անցնին ալիքներու նման եւ ես՝ մէկէն միւսին մէջ՝ կը սահիմ մէկ մանգաղէն միւսին առջեւ: Ահաւոր երկուքն ալ: Կ'արիւնի գոռողութիւնս: Կը կարմրի ծովը կիսաբաց աչքերուս դէմ: Կ'ամի բարութեան եւ անմեղութեան մէր մը: Ու աճող, տարածուող միսերուս այդ անսահման տարածութեան մէջ՝ կորսուած անհետացած կէտ մըն եմ: Ու ալիք ալիք՝ կը թաւալին ծանօթ ու անծանօթ դէմքեր, մղձաւանջային ու խոռվ, ուրախութիւն, ծիծաղ, հեգնանք ու մախանք, արհամարհանք եւ բողոք իրենց դէմքին, որոնք ապակիի պէս թափանցիկ՝ կ'անցնին մէջէս, կ'արձագանգեն: Ժամն է ուր սիրտս կը զարնէ վէրքի մըն նման, ու ձեռքերս կը փնտուեն զայն փեթթելու եւ նետելու համար կուրծքէս դուրս: Կը խօսի զիս գնացքներէն դուրս նետել ուզող ստուերը, կը համոզէ, ներկայացնելով ինծի մահը իրեւ միակ փրկութիւնը, միակ գեղեցկութիւնը կեանքին բոլոր տգեղութիւններէն վերջ: Եւ երբ պատրաստ կը զգամ զիս այդ արարքին, կը վախնամ ինքինքս եւ կը փնտուեմ բոլոր փաստերը ապացուցանելու համար թէ փախուստ մըն է այդ մահը եւ ոչ թէ լուծում մը: Պէտք է մնալ, ընդհակառակը, եւ նորոգել խորտակուած կամուրջները, վերահսատատել հաղորդակցութեան ճամբաները, իմացականութեան իշխանութիւնը:

Ժամն է երբ կողքիս պառկող կինը կը դառնայ անօգուտ՝ փրկելու համար զիս: Ինչո՞ւ խանգարել իր արդար քունը: Իմաստ մը չունի արդէն տառապանքս իրեն համար: Ու երբ այսպէս կախուած եմ մազի թելէ մը՝ անդունդին վրայ, որուն մամուտ, մածուցիկ ժայռերը կը սահին ձեռքերուս տակէն, ժամացոյց կը թուի փրկելու մօտ ուրիշ թել մը: Կը քակուին իր հիւսկերը մարմնիս ծանրութենէն, կը կտրին մէկ առ մէկ: Պիտի իյնամ: Ժամն է ապրումներէն ամենէն պիրկին: Զգացում ու մտածում կը յաջորդեն արագ անցքով մը: Կը քակուի, կը տարածուի, կ'ամփիոփուի ամբողջ կեանքս, ու կը դառնայ կիզիչ՝ կէտը ուր կը կեղրոնանան ճշմարտութեանց լոյսերը: Ու այրող հոգիս կ'արձակէ այն ատեն իր ամենէն մեծ դառնութեան բոցը գեղեցկութեան դէմ: Չարիքներուս, սայթաքումներուս ու ցաւերուս արմատը: Բարձրութեան այդ ծարաւը բացած է առջեւս վիհերուն ամենէն սեւն ու խորը: Անցած եմ տարիներուն մէջէն ստուերի նման, զրկանքով,

նախատուած ցեղի մը ցաւով, սպասելով, ընդգելով, պրկուելով, երջանկութեան յոյսով եւ կ'երթամ դէպի հող՝ առանց ապրած ըլլալու։ Եւ երբ հասած եմ վհատութեան այս եզրը, ինէ աւելի իմաստուն կը տեսնեմ մարդոց ամենէն անասնայինը։ Կը նախանձիմ անկէ իր գիւրին կեանքին համար։ Անկէ որ կը մտածէ լոկ ինքզինքին։ Կ'երազեմ տնակ մը անտառապահին տնակին նման ու ապրիլ անյայտ, հեզ, խոնարհ, բազմութեան ամենէն վարի խաւին վրայ։ Ծովափ մը միայն՝ քաշելու համար հանգիստ քուն մը ջուրերուն օրօրով, ճգնաւորի մը քարայրը, քաւելու համար մեղքերուն ամենէն մեծը, գեղեցկութեան սէրը։ Ժամն է ուր մտածումս գոռոզութեամբ կը հալածէ իր գոռոզութիւնը, իմացականութիւնս կը փարատէ ինքզինք։ Ու ան կը դաւէ ինքզինքին դէմ՝ մզելով զիս իրմէ վեր՝ դէպի հօրս ու մօրս Աստուածը, խնդալու համար պահ մը վերջ՝ իմ պարտութեանս վրայ։ Որովհետեւ այն պահուն՝ երբ քայլայուած, սպառած՝ կը դիմեմ Արարիչին, հայցելու համար քիչ մը անդորրութիւն ու բարութիւն ու զինք սիրելու սէր եւ հաւատք, ան, մտածումս, կը դնէ իր ճիրանները սատանայական բարակ մէջքին ու կը ծիծաղի, եգիպտական թռչնագլուխ սատուծոյ մը պէս։ Ու իր խօսքերը ճշմարիս են զարհուրելի կերպով։ «Կը զիմես անոր զոր կը նկատէիր տգիտութեան մը արդիւնքը եւ այն ատեն միայն, երբ վտանգի մը առջեւ ես, կամ բանի մը կարօտը ունիս...»

Ու մինչ կը բարձրանայ այդ ձայնը, աշունը, սուլող հովին հետ, ուրիշ մը, կողկողազին՝ կ'ընդունի իր թշուառութիւնը։ Ու այդ երկու ձայնները կը մօտենան, կը զարնուին իրարու։ Կը փլչի հոգիս։ Տառապանքս կը յայտնուի իբրեւ մեղք։ Մեղք նաեւ աղօթքը։ Մեղք՝ բողոքը։ Արարիչը կատարելութիւն մը միայն կրնայ ըլլալ, ըլլալու պարագային ու կատարելութիւն մը ոչ տալ գիտէ ոչ ալ առնել։ Բայց աղերսող ձայնը, այնքան ժառանգական, այնքան բնական այս պահուն, կը գտնէ միշտ բարձրանալու ճամբայ մը՝ մտածումիս բոլոր արդելքներուն մէջէն։

«Մեղա՛յ չար խորհրդով մտացս, նենդութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք, յաշախանօք, թուլութեամբ...»

Ու հեռուն, ծառերէն մէկը, ծեծելով կուրծքը, փեթթելով իր մեղքերը, կը նայի խաւարին՝ հաւատքէն լուսաւորուած, խոլ աչքերով, աղաղակելով կը կին ու լուսութեան մատնելով մնացեալ ծառերը։

«...Պոռնկական խորհրդով, արուական, իգական, անասնական,

գրաստական, գազանական, 'ի գիշերի եւ' ի տուընջեան, երազական գիշութեամբ եւ անրջական գարչ աղտեղութեամբ... Մեղա՛յ ամենայն յօդուածովք շինուածոյս եւ ամենայն անդամօք մարմնոյս... Վերամբարձ ոտնահարութեամբ եւ վայրաքարչ մեղկութեամբ, յաջ եւ յահեակ խոտորելով...»

Ու մինչ ծառը, իր բոլոր ուժերովը, կը փորձէ անջատուիլ հողէն, կը զատուի անկէ քիչ քիչ հօրս պատկերը ու կը տեսնեմ զինքը այնպէս ինչպէս տեսայ գիշեր մը, իր ծեր ու տժգոյն գլուխը հակած գիրքի մը վրայ: Ան լսած էր իմ անկողինէն ելլեւս բայց չէր դառնար նայելու ինծի, երբ բանալով գուռը, կը մտնէի սենեակէն ներս, կը մտենայի իրեն բոպիկ ոտքերով: Իր աչքերը չէին տեսներ զիս: Իր պզտիկ տղան ցուրտէն ու անքնութենէն ու կեանքին վտանգներէն զգուշացնող մարդը չէր այլեւս այդ պահուն, այլ մէկը որ հեռու է աշխարհիկ բոլոր հոգերէն: Կը կարգար: Նոր է որ կը գտնեմ բառերը կախարդական իր փափսութիւն:

«Զորն ասեմ, կամ զո՞րն խոստովանիմ. զի անթիւ են ցաւք իմ եւ անբուժելի են վէրք իմ...»

Տարուած Աստուծոյ պատկերով՝ ան զլուխը կը, գարձնէր մարդերէն՝ իր վերջին տարիներուն: Հասա՞ւ իր ճշմարտութեան, թէ եղաւ անհացում մը միայն: Բայց ի՞նչ փոյթ: Ան գնաց վսեմութեան մը ճամբով: Կարօտով կը բանեմ այս յիշատակը աչքերուս դէմ: Բայց ի զուր: Անօգուտ՝ պատգամը զոր կը բերէր հայրս գիշերին խորէն: Անօգուտ նաեւ աղօթքին կախարդական բառերը որ միաթարած էին սերունդներ: Կը շարունակուի խարշափը: Եւ այն ատեն, այն ատեն թափառում տերեւի մը՝ բակին մէկ ծայրէն միւսը, պզտիկ դադարներով, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ լոին խօսակցութիւն մը աչք աչքի՝ իր եւ հովին միջեւ ու միշտ անհամաձայն՝ կը դառնան չորս պատերուն միջեւ: Ու այդ մէկ հատիկ տերեւը կ'առնէ քիչ քիչ անսահման կարեւորութիւն մը: Կը հետեւիմ անոր մոլորումին՝ բոլոր մտածումներուս մէջէն, որոնց վրայ կ'աւելնայ նաեւ քննանալու անհրաժեշտութեան գաղափարը, աշխատանքին հոգը եւ աշխատանոցէն եկած դառնութիւնը, գործէն զրկուելու վախը: Ամբողջ ուշադրութիւնս կը կապեմ տերեւին, կարծէք թէ ճակատագրական խորհուրդ մը բլար եւ ամբողջ գոյութեանս եզրակացութիւնը: Օ՛ գիտակցութիւնը մեր թշուառութեան: Բայց ինչ բարիք, ուղեղս՝ այդ անկատար գործիքը, որ կը տեսնէ իր անկատարութիւնը, որ կը միմթարէ զիս՝ աշխարհը վերածելով տերեւի մը: Երակներէս կը հոսի հպարտ անդորրութիւն մը: Ի՞նչ մեծ բարիք այդ յուսահատութեան ետին: Կը կատարուի քիչ

քիչ հրաշքը: Կը քակուին քիչ քիչ պրկուած ջիղերը ու կ'անցնի մարմինէս թուլութեան հաճոյքին առաջին ալիքը, առաջին օրօրումը: Գլուխս, որ կ'այրէր աշխարհի բոլոր չարիքներուն կիզիչ աւագովը, կը կծկտէր, կը կտրէր՝ հնդիկի մը ձեռքին մէջ պղտիկ գունդի մը վերածող կտրուած պլուփի մը նման, կը դադրի ցաւելէ: Կը սուզուի մերթ քունին մէջ, կը վերադառնայ: Ու կը փնտոէ տերեւին ձայնը: Ու տերեւը կը յայտնէ ներկայութիւնը, կու տայ իրմէ սպասուած ապահովութիւնը, իմաստութիւնը, եթէ կ'ուզէք, քիչ մը աւելի հեռուէն այլեւս: Ու հեռուէն այլեւս, խոնջնքիս բամպակային տարածութեան մէջէն, կը լսուին վերջին խօսքերը տուամին, նուազ ազդեցիկ հիմա:

«Վատնեցիր կեանքդ: Ի՞նչ գեղեցկութիւն կը յուսաս տակաւին: Քեզի կը մնայ կեղծել, խաղալ բոլորին պէս... (լոռութիւն մը): Ապրիլը աղտոտիլ է... եւ դուն ապրեցար մինչեւ այս տարիքդ... կրնաս դեռ ապրիլ... եւ կարեւորը այդ է...»

*

Աշունը, կը գտնեմ խաղաղութիւնս անյուշ բերդի մը մէջ:

*

Այս բոլորը կը դառնան աւելի մեռելային՝ ձմրան գիշերներուն մէջ՝ երբ ամլութիւն մըն է անտառը ձիւնին տակ, լոռութիւնը ունայնութեան: Սառած են լիճերը, սառած նաեւ ջրվէժը: Լուսինն իսկ կը ժամի սառոյցէ ակռաներով: Կրակին պակասը տանս մէջ կը դարձնէ զիս գերին ակողինին՝ որուն մէջ անքուն, կ'ունենամ գերեզմանի մը խորը ողջ ողջ թաղուածի մը ճակատագիրը: Կը խեղդուիմ: Կը սպասեմ լոյսին որ կ'ուշանայ: Տուամը կը վերջանայ վերի յարկէն եկող ժամացոյցի մը զանգակով: Մարդը կ'եւմէ գործին երթալու համար: Կեանքը իը յայտնութիւնը կ'ընէ: Շունչ կ'առնեմ ու կ'իյնամ քուներէն ամենէն անուշին մէջ: Պիտի ապրիմ առանց յոյսի: Ահա գեղեցկութիւնը կեանքին:

Ու ես կ'արթնամ հսկումի դատապարտուած մէկու մը պէս գարնան եւ ամրան գիշերներուն մէջ: Ու երբ, որոնումէ մը վերջ, կը վերագտնեմ մտերմութիւնը սենեակիս իրերուն, կը ճշգեմ գիրքս, ժամանակը եւ կը ճանչնամ անձս, կը սկսի մաքառումներուն ամենէն ահաւորը, հասնելու համար նաեւ յաղթանակներուն ամենէն շքեղին:

*

Ամառը, կախարդական է Վէնսէնի անտառը:

Խոռովագ ու խանդավառութիւն կը յաջորդեն միշտ:

Լուսաբացին մօտ կը լսուի յանկարծ թռչունի մը ձայնը, այն պահուն երբ անքնութենէ մը վերջ՝ սպառած կը թաւալիմ քունին մթին բայց մոգական զառիթափին վրայ, մեծնալով ձիւնագնդակի մը պէս, ժողվելով ճամբուն խաւարը, փաթթուելով տեսիլներու մէջ, զօրանալով եւ սակայն ճանրանալով նոյն ատեն անոնց կուտակումէն, սուրալով դէպի վիճը: Ու թռչունին այդ ճիշը կը կեցնէ յանկարծ զիս: Կեանքին բիւրեղն է որ կը հնչէ կարծէք: Եւ ահա ուրիշ մը որ կը բացուի մէջս լուսեղէն դրօշի մը նման: Կը փայլին հոգիիս բոլոր սեւ խորշերը ու բոլոր ոսկորներու: Ժամն է խորհուրդներուն խորհուրդին: Ժամը օգին ու ծառերուն վերացական սարսուսին:

Խօսակցութիւն մը ծառէ ծառ՝ գերիրական ձայներով, անծանօթ պատմութիւն մը, ընդհատուած մերթ բողոքներով, մերթ ամբարտաւան բայց անուշ շեշտերով: Երգ մը մերթ, պայծառ, ապառաժի մը ճեղքէն հոսող ջուրի մը յորդումով: Ուրիշ մը մելամաղձոտ, քաղցր, անմեղ, փայլուն՝ ինչպէս մեղքը, հեղ՝ ինչպէս երգը սիրահարին վերագարձը երազող կոյսին: Թեւերու թրթուացում մը մերթ՝ հպարտ ու խանդավառ: Ու ճիւղերու ծփանք մը: Ծլարձակում մը լոյսի, ձայնի եւ բոյրի՝ բազմահազար խեղբերով:

Խաւարէն վերջ, լուսաբացը ունի շնորհի մը գեղեցկութիւնը: Երանութեան պահ մը կայ քունին ու զարթնումին միջեւ: Երկնքին պէս, կը բացուի կարծէք ամբողջ մարմինս, կը դառնայ թափանցիկ իրերուն եւ էակներուն առջեւ: Ունիմ յաղթանակ մը տարած ըլլալու անյայտ տպաւորութիւնը: Ունիմ ապրելու գեղեցկութեան գաղտնիքը: Զանազան են լուսաբացները: Վեհութիւն մըն են անոնք աշունը, անուշ՝ յիշատակին չափ սիրելիի մը որ հեռացած է մենէ եւ որուն վերադարձին կը սպասենք: Զմեռը՝ այդ անուշութիւնը կը դառնայ կարօտագին, երբ մշուշ է գուրսը եւ ելեկտրական լոյսով կը հագում եւ գործիս կ'երթամ արեւը չտեսած: Գարունը՝ կը լսեմ արդէն սիրածիս փայլերը: Խոռովի մէջ է հոգիս: Ու կու գայ ամրան լուսաբացը, ամենէն շքեղը: Լոյսը կ'ողողէ զիս: Կ'ողողեն զիս՝ բոյրերը փայրի շագանակներուն, թմբիներուն եւ աքասիաներուն: Օդը կը հնչէ շուրջս բարակ փողերէ բխող դողերով ու շողերով: Շքեղ մանաւանդ՝ երբ չունիմ գործի երթալու հոգը: Կեանքին հեռու՝ ես զայն կ'ըմբռնեմ այն ատեն խորապէս, իր անարատ հութեամբ, շնորհի մը պէս: Ան կը յայտնուի ինծի՝ իր ամբողջ կսեմութեամբ, երբ չեմ խորհիր այլեւս մեր առօրեայ ու ստիպողական ու շատ անգամ անիմաստ նիգերուն, աշխատանքին, հացին ու զանազան վայելքներուն եւ զբկանքներուն,

գաղափարներուն որոնց համար իրար կը հալածենք կեանքն ի վեր: Ծուլութիւնը կը զառնայ սրբութիւն մը: Յաղթանակ մը: Շնորհ մը: Ու հոգիիս խորէն կը բարձրանայ երախտագիտութիւն մը բնութեան ու մարդոց հանդէպ: Ոովհետեւ, պիտի ունենայի՝ այդ երանութիւնը՝ եթէ չըլլային անոնք: Ծուլութիւնը պտուղն է մեր յոգնութեան: Շնորհ արգիւնքն է բարիին ու չարին բախումին: Ամրան լուսաբացը ունի տօնի մը մեծութիւնը: Կը զգամ յստակ մաքուր ու արդար ան-դորրութիւն մը կեղծիքներէն վեր... Յարութիւն մը:

Ի՞նչ պահ: Դուրս կու գամ կարծէք լոին ծովու մը խորէն: Կը լսեմ: Կը զգամ: Կ'արձագանգեն թոչուններուն երգերը գաղջ ու պայծառ բիւրեղի մը մէջէն: Փառաբանութիւն մը: Անպատմելի ուրախութիւն մը: Յուղում մը սիրածը գտնողի: Վախի ու վշտի նկարագրութիւն մը: Ու սիրոյ գինովութեան երգ մը: Ու այդ բոլորը կ'աճին, կը ճիւղաւորուին լուսեղին բուսականութեան մը պէս: Ու կը ցրուին քիչ քիչ անոնց առջեւ ներքին ստուերները, լքելով իրենց գաղտնի ու անհեթեթաշխատանքը, կը հեռանան ալիքներու ծփանքով, տուամի մը դերակատարաններուն նման, կամ խաւարի մէջ զղեակ մը քանդելու լծուած ոգիներուն պէս: Թոչուն մը կը հալածէ զանոնք Զատիկի ոստի սուլիչի ճիչով:

Ի՞նչ պահ: Աչքերս փակ՝ ես կը սահիմ անսահման ու հեշտալիր տարածութեան մը մէջէն, քակելով մէկ առ մէկ ցաւիս, խոնջէնքիս, տրտմութեան ու յուսահատութեան կապանքները, թեթեւնալով, բարձրանալով դէպի լոյսը, գառնալով թափանցիկ ու պայծառ: Ու լուսածազը, փոխն ի փոխ կ'ըլլայ երազային կին մը, վիհերէն վեր թեւածող թոչուն մը, ծառի մը կատարը, ազգիւր մը՝ ուրկէ կը հոսին բոլոր բարիքները: Ի՞նչ պահ երբ տակաւին չեմ ճանչնար ես զիս, չեմ առած ինքնութիւնս ու չեմ գիտեր ուր ըլլալս: Ամէն ինչ յստակ է արտակարգորէն, ամէն ինչ. մէկ ոստէն միւսը սլացող թոչունին թեւաթագը, տերեւններուն սարսուռը, թաւիչը կատուի մը թաթերուն, շան մը ոտքերէն քակուող երկաթէ թելը, աւելի մը աղմուկը՝ որ կը յիշեցնէ պարուէիր մը երկար քղանցքը, բայց մանաւանդ աւելը մօրս՝ որուն ձայնով կ'արթնայի դպրոց երթալու համար: Մայրս, աւելով պարտէզը, կը մօտենար պատուհանիս, կը մաքրէր նաեւ հոգիս ամրան ամէն լուսաբացի: Ու ինծի կը թուի թէ այս բոլորը իմ մէջս են: Ձուլուած են ներքին ու արտաքին աշխարհները: Ոչ մէկ սահման: Ու ես ամէն կողմ եմ, երկրագունդին հեռաւոր ծայրերուն վրայ, տարտամ վերյիշումովը ապրած երկիրներուս եւ քաղաքներուս, տեսած զշտերուս ու արտերուս, ծառերուս ու ճամբաններուս, ծովերուս ու գետերուս: Զարմանալի է տիրացումը այս բոլորին՝ երբ

հեռու եմ անոնցմէ եւ որոնց պէտքը չեմ զգար: Պէ՞տք է հետեւցնել թէ աւելի մօտ եմ Արարիչին երբ չեմ մտածեր Անոր ու կ'անգիտանամ Զայն, երբ շահախնդիր աղօթողը չեմ, անձնասէրը՝ որ միշտ բան մը կ'ուզէ երկինքէն, կամ անոր դէմ ելլողը, որ, զարձեալ անձնականութեամբ՝ կը քէնոտի անոր զլացումներէն:

Կախարդական է Վէնսէնի անտառը: Հասած եմ փորձառութեանց ներքին խոացումին: Ունիմ ջերմեռանդ հաւատացեալի մը երանութիւնը առանց հաւատքին: Մառերուն կանաչը կը փայլի տարբեր սրբութեամբ մը: Քաղաքը կ'որոտայ տարբեր խորհուրդով մը: Լոյսը՝ կիսաբաց կոպերուս տակ՝ կ'առնէն նշենիներու ծաղիկներուն գոյնը:

Ու արքեցում մըն է այս քաղցրութիւնը, անոր նման՝ զոր կը զգայ ճամբորդը, փոթորկոտ գիշերէն վերջ, նաւուն ցոռւկին վրայ, լուսաբացին տակ երեւցող նոր, անծանօթ եւ յոյսերու քաղաքի մը առջեւ: Շնորհը իմացականութեան, որ կը յասնէ իր մոխիրներէն, իր կենսունակ, կորովի ու յաղթական գալուստին առաջին յուզումը, լուսաբաց մը լուսաբացին մէջ, ուր սիրտ ու մտածում հաշտուած են եւ ուր գեղեցկութիւնը կը դատնայ կրկին գեղեցկութիւն, խանդավառութեան աղբիւր: Լոյսը՝ կիսաբաց աչքերուս դէմ ունի Բարթէնոնի մը մարմարին ճերմակութիւնը: Կ'ելեմ անկողինէս, նորոգուած, թարմացած, մաքրուած:

Ու ծառերուն դէմ, սեղանիս առջեւ կը սկսի իրական կեանքը:

Յաղթանակ մը, չնորհ մը: Հաւատք ու ուրացում զուրկ են նշանակութենէ: Մոռցած եմ բոլոր կեղծիքները: Կեանքը նորութիւն մըն է առջիս: Կ'ապրիմ հրաշք մը մէջ: Տէրն եմ բոլոր ուժերուս: Ցորդող կամք ու խանդավառութիւն եմ: Արտադրող ուժ մը, իտէլներէն ու նենգութիւններէն վեր, բարի՝ բոլոր չարիքներուն դէմ, հաշտ անկարելիին առջեւ, անտարբեր՝ արտաքին բոլոր խանդավառութիւններուն հանդէպ, մետիումը սրբազան խորհուրդի մը, մեղու մը՝ որ մեղը կու տայ առանց մտածելու, շերամ մը՝ որ կը կորսուի իր մետաքսէ թելերուն տակ: Թուշուն մը որ գինով է իր ձայնին բիւրեղը պարպելով:

Վէնսէնի անտառը կը տանի զիս մինչեւ ծայրագոյն վերացում:

Կախարդական է Վէնսէնի անտառը:

Կանաչութիւնը կ'ուռափ առաւտեան ջերմէն, կը տարածուի, թարմ, առատ ու վսեմ՝ կը յորդի մակընթացութեան մը նման՝ տանիքներուն վրայէն, կը հոսի խառնուելով պայծառ ու արդար լոյսին որ կ'աճի անդադար:

Այս անտառին մէջ, կ'ըսեն, կաղնիի մը տակ, դարեր առաջ,
 թագաւորներէն մէկը, Աչն Լուփի, խաչակրութենէն վերադարձին, իր
 պարտութեան, գերութեան ու ազատագրութեան յիշատակներով
 իմաստուն՝ կը դատէր յանցաւորները ամենայն արդարութեամբ:
 Մառերը կու տան մերթ անոր անունը, երբ լուսաբացը կը թափանցէ
 զիրենք լուսարձակի մը պէս: Այն ատեն, դարերուն մէջէն,
 իրականութիւնը կը վերածուի առասպելի մը ու առասպելը իրականու-
 թեան: Ու կեանքը, երազային այդ պարապին մէջ՝ կը դառնայ հրաշք
 մը: Այս է պատճառը որ ամէն առաւօտ կ'անցնիմ սեղանիս առջեւ ու կը
 դառնամ խանդավառ, այսպանելէ վերջ խանդավառութիւնն ու յոյսը
 յանուն մողութենէն զերծ՝ յստակ իմացականութեան մը: Ճշմարտու-
 թիւնը կը ծնի կեղծիքէն ու կը գառնայ կրկին կեղծիք: Բայց գեղեցիկ է
 իրմէ բխող լոյսը: Այսպէս է որ ամէն առաւօտ՝ ներկաս կը քալէ
 զուգահեռական մանկութեանս հետ: Հին օրերու տղան եմ երբ կ'ար-
 թիւնամ սարսափով: Պահ մը վերջ, կը զնեմ անոր առջեւ խաչակրու-
 թեան, պարտութեան, գերութեան եւ ազատագրութեան
 յիշատակներս: Ու կը կատարուի հրաշքը: Տղան սրբութեան մը կը
 վերածէ դառնութեանս արջասպն իսկ որմէ կ'առնէ իր անդորրու-
 թիւնը: Ու կ'ըլլայ ներդաշնակութիւն: Այդ արջասպը կը դառնայ
 բարութիւն, կարեկցութիւն ու հայրենասիրութիւն: Կինը, քունին
 մէջ՝ կ'երեւայ աւելի գեղեցիկ ու վսեմ, քաջ, աւելի ողբերգական՝ իր
 արգանդին ցաւովը, մարգերէս աւելի վեր: Ու էջերս, որ, գիտեմ,
 պիտի երթան մոռացութեան վիճն ի վար, բոլոր էջերուն պէս, կը
 ծածկեն պահ մը այդ վիճը՝ սրբազան լոյսի մը նման, երբ լուսաբացը
 կը թափանցէ հոգիս խորերը: Ու կեանք կ'առնեն կրկին սառելու մօտ
 երազները... .

Անդորրութիւն՝ ալեկոծումէն վերջ: Օրհնեալ՝ լուսաբացի
 արեւը: Օրհնեալ՝ նաեւ ինծի հետ տառապող, ճերմկող մագերով կնոջ
 սրբազան ձայնը, այն որ անկեղծութեամբ ու բարութեամբ կու տայ
 անունս ամէն առաւօտ: Ի՞նչ պիտի ըլլայի առանց անոր: Հայրենիք մը,
 աղբիւր մը՝ ինծի յոյս ու կորով տուող: Ան այնքան մաքուր է որքան
 բարձրերէն եկող արեւին լոյսը եւ արդար: Եւ այսպէս,
 երախտագիտութեամբ կը մօտենամ անոր ամէն առաւօտ:
 Յուսահատութիւնը կ'ածի մինչեւ յոյս ու խանդավառութիւն՝ այս
 բոլոր բիւրեղներուն առջեւ:

Մոգական է Վէնսսէնի անտառը: